

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Նկարում Ա տառով նշված է.

- 1) գետաբերանը
- 2) գետի հունը
- 3) գետի ակունքը
- 4) ողողատը



2

Յուրաքանչյուր ժամային գոտի ընկած է 2 միջօրեականների միջև, որոնք իրարից հեռու են.

- 1) 15°
- 2) 90°
- 3) 60°
- 4) 45°

3

Պրահա (արլ. ե. 14°) և Տոկիո (արլ. ե. 140°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 6 ժամ
- 2) 8 ժամ
- 3) 2 ժամ
- 4) 4 ժամ

4

Մթնոլորտի ազդեցության հետևանքով առաջանում են.

- 1) գեյզերները
- 2) ծովային հոսանքները
- 3) տարվա եղանակները
- 4) մակընթացությունը և տեղատվությունը

5

Ամառային մուսսոնին հատուկ են.

- 1) չոր եղանակները
- 2) անձրևային եղանակները
- 3) ցուրտ եղանակները
- 4) շոգ եղանակները

6

Օրվա ընթացքում վայրի եղանակի փոփոխություններն ամենից առաջ պայմանավորված են.

- 1) հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրության փոփոխությամբ
- 2) մթնոլորտային ճնշման փոփոխություններով
- 3) քամու ուղղության և արագության փոփոխությամբ
- 4) օդի խոնավության փոփոխություններով

7

Որն է տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) օվկիանոսի ջրի աղիությունից
- 2) ծովային հոսանքների տեսակից
- 3) գերիշխող քամիների ուղղությունից
- 4) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից

8


Արշավախումբը հս. լ. 6° , արմ. ե. 86° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 35 օր անց կլինեն.

- 1) հս. լ. 4.5° , արմ. ե. 86°
- 2) հվ. լ. 10.5° , արմ. ե. 86°
- 3) հս. լ. 10.5° , արմ. ե. 86°
- 4) հվ. լ. 4.5° , արմ. ե. 86°

9

Գծագրում ցույց տրված շեղման ուղղությունները n° ը կիսագնդին են վերաբերում:


- 1) արևելյան
- 2) արևմտյան
- 3) հյուսիսային
- 4) հարավային



10

Նկարում n° թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2



11

«Մայրցամաք — անապատներ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Հարավային Ամերիկա — Լիբիական և Նուբիական
- 2) Ավստրալիա — Ավազային մեծ անապատ և Վիկտորիա մեծ անապատ
- 3) Եվրասիա — Գոբի և Տակլա Մական
- 4) Աֆրիկա — Կալահարի և Նամիբ

12

Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր չեն առանձնացվում.

- 1) արևադարձային
- 2) հասարակածային
- 3) մերձարևադարձային
- 4) բարեխառն

13

Բնութագրումով որոշել գետը.

Այս գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծովը: Հայտնի է իր վարարումներով, որոնք կապված են մուսսոնային անձրևների հետ: Ո՞րն է այդ գետը.

- 1) Մեկոնգ
- 2) Ամուր
- 3) Հուանհե
- 4) Յանցզի

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:
- 2) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 3) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 4) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:

15

Ո՞ր սահմանումն է սխալ.

- 1) Մայրցամաքների և օվկիանոսների սահմաններում առանձնացվող, երկրագունդը հասարակածից բևեռներ ուղղությամբ գոտևորող բնատարածքային համալիրները կոչվում են բնական զոնաներ:
- 2) Աշխարհագրական թաղանթի այն մասը, որը հարակից տեղանքներից տարբերվում է իր ինքնատիպ մակերևույթով, կլիմայով, ջրերով, հողաբուսական ծածկույթով, կենդանական աշխարհով, այդ բաղադրիչների կապերով ու փոխազդեցություններով, կոչվում է բնատարածքային համալիր:
- 3) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է վերընթաց գոտիականություն:
- 4) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ աշխարհագրական լայնության կոչվում է լայնակի կամ հորիզոնական զոնայականություն:

16

«Գետ — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Պարանա — Ատլանտյան
- 2) Մաքենզի — Խաղաղ
- 3) Նիգեր — Հնդկական
- 4) Կոլումբիա — Հյուսիսային սառուցյալ

17

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Ֆլորիդա և Յուկատան
- 2) Յուկատան և Կալիֆոռնիա
- 3) Ֆլորիդա և Կալիֆոռնիա
- 4) Յուկատան և Լաբրադոր

18


Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Դանուբ, Ամուր, Յանցզի
- 2) Օբ, Լենա, Վոլգա
- 3) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս
- 4) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ

19

Ո՞ր ծոցն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Հուդզոնի
- 2) Մեքսիկական
- 3) Ֆանդի
- 4) Սուրբ Լավրենտիոսի



20

Ո՞ր գետն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Կոլորադո
- 2) Կոլումբիա
- 3) Ռիո Գրանդե
- 4) Միսսիսիպի

21

Աշնանային գիշերահավասարի օրը հյուսիսային կիսագնդում.

- 1) աշուն է
- 2) ձմեռ է
- 3) գարուն է
- 4) ամառ է

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կուր-Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:
- 2) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
- 3) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:
- 4) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:

23

Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին կազմում է մոտ.

- 1) $73,5^\circ$
- 2) 90°
- 3) $26,5^\circ$
- 4) 50°

24


Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության խտությամբ գերազանցում է Եվրոպայի մյուս տարածաշրջաններին:
- 2) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են խոշոր գյուղական բնակավայրերը:
- 3) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 4) Բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է:

25

Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ ծովից ունեցած հեռավորության: Ո՞ր հեռավորության գոտուն է համապատասխանում 2 թիվը.

- 1) 500–1000 կմ
- 2) 1000 կմ–ից ավելի
- 3) մինչև 50 կմ
- 4) 50–200 կմ



26

«Ժողովրդագրական պայթյունի» գլխավոր պատճառն է.

- 1) զարգացող երկրներում քաղաքաբնակների թվի ավելացումը
- 2) զարգացող երկրներում բնակչության մահացության նվազումը ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում
- 3) զարգացած երկրներում բնակչության բարձր բնական աճը
- 4) կանանց կրթական մակարդակի բարձրացումը

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) սուբուրբանիզացում
- 2) տարաբնակեցում
- 3) ուրբանիզացում
- 4) կեդ ռուրբանիզացում

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Այս ծովային պետությունն աշխարհի զարգացած և հզորագույն երկրներից է: Ամենաբարձր գազաթը գործող հրաբուխ է: Միազգ պետություն է: Աչքի է ընկնում բնակչության բարձր միջին խտությամբ: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Չինաստանը
- 2) Հնդկաստանը
- 3) Ռուսաստանը
- 4) Ճապոնիան

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության մահացության ցուցանիշը, եթե ծնելիությունը 24 ‰ է, բնական աճը՝ 18 ‰.

- 1) 42 ‰
- 2) 6 ‰
- 3) 9 ‰
- 4) 16 ‰

30

«Պետություն — պետական կառավարման ձև» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) ԱՄՆ — խորհրդարանական հանրապետություն
- 2) Նիդերլանդներ — սահմանադրական միապետություն
- 3) Ճապոնիա — բացարձակ միապետություն
- 4) Գերմանիա — նախագահական հանրապետություն

31

Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային պետական կառուցվածք.

- 1) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա
- 2) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
- 3) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա
- 4) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան

32

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
- 2) պողպատ — մետաղաձուլություն
- 3) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 4) պլաստմասսա — մեքենաշինություն

33

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար պողպատի ձուլմամբ.

- 1) Չինաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա
- 2) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա
- 3) Ավստրալիա, Ֆրանսիա, Իտալիա
- 4) Իրան, Ռուսաստան, Թուրքիա

34

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մակընթացային էլեկտրակայանները շրջակա միջավայրը չեն աղտոտում:
- 2) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 50 %-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին:
- 3) Վառելիքային արդյունաբերությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի արտադրությամբ և այն սպառողին մատակարարելով:
- 4) Նավթի համաշխարհային պաշարների շուրջ 9/10-ը կենտրոնացված է զարգացած երկրներում:

35

Աքվակուլտուրա է կոչվում.

- 1) ծովից հանքային ռեսուրսների արդյունահանումը
- 2) ձկների և ջրային այլ կենդանիների արհեստական բուծումը փակ ջրավազաններում
- 3) ձկների և այլ ծովային օրգանիզմների որսը
- 4) ծովային օրգանիզմների բնական վերարտադրությունը

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԳՏՀ-ի ազդեցությամբ միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքում նվազել է պատրաստի արտադրանքի բաժինը, ավելացել է հումքի և վառելիքի բաժինը:
- 2) ԳՏՀ-ի բնորոշ գիծն է գիտության սրընթաց զարգացումը, որի արդյունքում գիտությունը վերաճում է անմիջական արտադրողական ուժի:
- 3) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրությունը տեղաբաշխվում է գիտական և կրթական կենտրոններից բավականին հեռու:
- 4) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրության տեղաբաշխման վրա բնական գործոնների ազդեցությունը սկսում է մեծանալ:

37

Ներքին ջրային տրանսպորտը զարգացած է.

- 1) Գերմանիայում
- 2) Իրանում
- 3) Հայաստանում
- 4) Ճապոնիայում

38

Բնութագրումով որոշել արդյունաբերության ճյուղը.

Արդյունաբերության այս ճյուղն ունի լայն հումքային բազա. բնական հանքային հումք, արդյունաբերության այլ ճյուղերի թափոններ: Ո՞ր ճյուղն է.

- 1) մետաղաձուլությունը
- 2) թեթև արդյունաբերությունը
- 3) քիմիական արդյունաբերությունը
- 4) մեքենաշինությունը

39

Թուրքիային սահմանակից են.

- 1) Սիրիան և Հունաստանը
- 2) Օմանը և Ռուսաստանը
- 3) Իսրայելը և Իրանը
- 4) Սաուդյան Արաբիան և Վրաստանը

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Հյուսիսային Եվրոպայի այս պետությունը աշխարհում առավել խտաբնակներից է: Աչքի է ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով: Մայրաքաղաքը ծովային խոշոր նավահանգիստ է: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Ֆինլանդիան
- 2) Շվեդիան
- 3) Նորվեգիան
- 4) Մեծ Բրիտանիան

41

Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:
- 2) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:
- 3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 4) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:

42

ԱՄՆ-ի Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում ձևավորվել է.

- 1) «ցորենի գոտին»
- 2) «բամբակենու գոտին»
- 3) «բրնձի գոտին»
- 4) «եգիպտացորենի գոտին»

43

Ո՞ր գետերի միախառնումից է առաջանում Շատ-Էլ-Արաբ գետը.

- 1) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս
- 2) Տիգրիս և Եփրատ
- 3) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ
- 4) Արաքս և Կուր

44

«Գետ — ակունք» զույգերից ընտրել սխալը.

- 1) Արածանի — Ծաղկանց լեռներ
- 2) Տիգրիս — Վասպուրականի լեռներ
- 3) Արևմտյան Եփրատ — Ծաղկավետ լեռներ
- 4) Արաքս — Բյուրակն լեռնազանգված

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տեղումների քանակն ամենաքիչը Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների հատակային մասերում է՝ 300 մմ-ից պակաս:
- 2) Միջնաշխարհում տարեկան տեղումների միջին քանակը 1000–1200 մմ է:
- 3) Օդի բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տատանման լայնություն անցնում է 90°C-ից:
- 4) Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում:

46

ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:
- 2) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
- 3) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 4) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:

47

Փոքր քիմիայի արտադրատեսակներ են.

- 1) ծծմբաթթուն և պղնձարջասպը
- 2) քիմիական ռեակտիվները և վիտամինները
- 3) լաքերը և պլաստմասսան
- 4) ացետիլենը և քլորոպրենային կաուչուկը

48

«Վարչական շրջան — կենտրոն» գույզերից ընտրել *սխալը*.

- 1) Մարտակերտ — Մարտակերտ
- 2) Շահումյան — Քարվաճառ
- 3) Ասկերան — Ստեփանակերտ
- 4) Հաղրութ — Հաղրութ

49


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Մարզի տարածքում կան գորշ ածխի պաշարներ:
- 2) Ընդերքը հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:
- 3) Հարուստ է հանքային աղբյուրներով:
- 4) Հարուստ է բենթոնիտային կավերի պաշարներով:

50

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Պերուական
- 3) Գվիանական
- 4) Բրազիլական



51

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Զ տառով.

- 1) Ասունսիոն
- 2) Կարակաս
- 3) Բոգոտա
- 4) Հավանա

52

Վայրի հացազգիների պահպանության ու վերարտադրության նպատակով կազմակերպված ՀՀ հատուկ պահպանվող տարածքներից է.

- 1) Շիկահողի արգելոցը
- 2) Խոսրովի արգելոցը
- 3) Էրեբունիի արգելոցը
- 4) Դիլիջանի ազգային պարկը

53

Ջրային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

- 1) Նորվեգիան և Ֆինլանդիան
- 2) Լիբիան և Սաուդյան Արաբիան
- 3) Քուվեյթը և Եգիպտոսը
- 4) ԱՄԷ-ն և Կատարը

54

Ո՞ր բնական ռեսուրսներով են համեմատաբար աղքատ լեռնային տարածքները.

- 1) ռելիեֆը
- 2) վառելիքային
- 3) ջրաէներգետիկ
- 4) մետաղային

55

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսախնայողություն
- 2) ռեսուրսի տեղաբաշխում
- 3) ռեսուրսապահովվածություն
- 4) ռեսուրսի գնահատում

56

Գրել նավարկելի ջրանցքների համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Սուեզի | 5) Պանամայի |
| 2) Թաթարական | 6) Կուկի |
| 3) Ֆլորիդայի | 7) Քիլի |
| 4) Բերինգի | 8) Ջոնսոն |

57

Գրել Խաղաղ օվկիանոսում և նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|------------|---------------|
| 1) Թայվան | 5) Շրի Լանկա |
| 2) Ֆիջի | 6) Իսլանդիա |
| 3) Հավայան | 7) Ֆիլիպինյան |
| 4) Ճամայկա | 8) Շախգրերգեն |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|----------------------------|
| 1) Ալյասկայի | 5) Ասեդի հրվանդանի |
| 2) Գվինեական | 6) Հյուսիսխաղաղօվկիանոսյան |
| 3) Գվիանական | 7) Գոլֆստրիմ |
| 4) Կուրո Սիո | 8) Արևելաավստրալական |

59

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.

- | | |
|----------------|------------|
| 1) Էմու ջայլամ | 5) եքիդնա |
| 2) կենգուրու | 6) կոնդոր |
| 3) բիզոն | 7) կարիբու |
| 4) բադակտուց | 8) ցեցե |

60

Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.

- | | |
|----------------|------------------|
| 1) Լիխտենշտայն | 5) Նիդերլանդներ |
| 2) Բելգիա | 6) Ավստրիա |
| 3) Պորտուգալիա | 7) Ման Մարինո |
| 4) Դանիա | 8) Լյուքսեմբուրգ |

61

Գրել հրաբխային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------|-------------------|
| 1) Ակնա | 5) Այդր (Մեծամոր) |
| 2) Ալ | 6) Սև |
| 3) Քարի | 7) Փարվանա |
| 4) Արմադանի | 8) Պարզ |

62

Տրված պետությունները դասավորել երկաթուղիների երկարության նվազման կարգով.

- 1) Հնդկաստան
- 2) Ռուսաստան
- 3) Գերմանիա
- 4) ԱՄՆ

63

ՀՀ տրված հողային տիպերի համարները դասավորել ըստ հումուսի պարունակության հետևյալ հաջորդականությամբ՝ 4–11 %, 1–2 %, 8–13 %.

- 1) լեռնային սևահողեր
- 2) կիսաանապատային գորշ հողեր
- 3) մարգագետնատափաստանային

(64-65). Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ $+28^{\circ}$:
Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը $+13^{\circ}\text{C}$ է (հաշվարկը կատարել 6°-ով).

64

Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65

Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

(66-67). Երկրի բնակչության թիվը 1.8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 16 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

66

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67

Որոշել բնակչության մեխանիկական աճը:

68

Ռուսական «Միոնի» գիտակայանը հվ. լ. 66° -ի վրա է: Բնեռախույզները, «Միոնի» գիտակայանից դահուկներով շարժվելով 2,4 կմ/ժ միջին արագությամբ, քանի՞ ժամում կհասնեն Հարավային բևեռ:

Թուրքիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 2) Ազգային եկամտում արդյունաբերության բաժինը զգալիորեն գերազանցում է ծառայություններին:
- 3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:
- 4) Ունի զարգացած թեթև արդյունաբերություն, որի համար հումք է ծառայում սեփական գյուղատնտեսական արտադրանքը:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 6) Բուսաբուծության մեջ մեծ է հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի բաժինը:

ՀՀ էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
- 2) Ջերմաէլեկտրակայանները տեղակայված են Հրազդանում, Երևանում և Վանաձորում:
- 3) Մեծամորի աէկը միակ ատոմակայանն է Հարավկովկասյան տարածաշրջանում:
- 4) Հրազդան և Որոտան գետերի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:
- 5) Գործում են ջրային, ջերմային, ատոմային, ինչպես նաև քամու ուժով աշխատող էլեկտրակայաններ:
- 6) Էլեկտրաէներգետիկան բացառապես կախված է ներմուծվող էներգակիրներից: